



Համարը N 03-Ն

Տիպը Հրաման

Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2008.05.15/16(290)

Հոդ. 167

Ընդունող մարմինը Կառավարությանն առընթեր
հարկային պետական
ծառայության պետ

Ստորագրող մարմինը Կառավարությանն առընթեր
հարկային պետական
ծառայության պետ

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 25.05.2008

Տեսակը Ինկորպորացիա

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 21.03.2008

Ստորագրման ամսաթիվը 21.03.2008

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ-ՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԶԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության

նախարարության կողմից

28 ապրիլի 2008 թ.

Պետական գրանցման թիվ 12408140

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

21 մարտի 2008 թ.

ք. Երևան

N 03-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԶԵՎԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածը ու նպատակ ունենալով կանոնակարգել և միասնականացնել «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածով և «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված՝ ոչ ռեզիդենտի վճարած հարկերի (շահութահարկ, եկամտահարկ) մասին տեղեկանքների տրամադրումը՝

Հրամայում եմ՝

Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին տեղեկանքի ձևը և տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ կառավարությանն առընթեր
հարկային պետական
ծառայության պետ՝

Վ. Բարսեղյան

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարության հետ
3 ապրիլի 2008 թ.
N 241-Ս

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության պետի
21 մատի 2008 թ.
N 03-Ն հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՍԱՍԻՆ
CERTIFICATE ON TAXES PAID BY NON-RESIDENT IN THE REPUBLIC OF ARMENIA

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ _____ հարկային տեսչությունը՝

The Tax Inspectorate of the State Tax Service of Armenia

հաստատում է _____

certifies that

_____ կողմից.

(իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը և ազգանունը, որի
շահույթից (եկամտից) վճարվել է հարկը / name of corporate person or name and
surname of natural person, whose income was taxed)

1.1. Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի (եկամտահարկի) վճարման փաստը
Has paid the income (profit) tax in the Republic of Armenia for the period of

_____ ժամանակահատվածի համար,

գումարով՝ _____, որից

(գումարը թվերով և տառերով / in figures and letters)

in the amount

including

_____ դրամ _____ վճարվել է համաձայն «Շահութահարկի մասին»
(գումար, արտարժույթ)

ՀՀ օրենքի

AMD paid in accordance with Law of the Republic of Armenia On Profit Tax

_____ դրամ _____ վճարվել է համաձայն «Եկամտահարկի մասին»
(գումար, արտարժույթ)

ՀՀ օրենքի

AMD paid in accordance with Law of the Republic of Armenia On Income Tax

_____ դրամ _____ վճարվել է համաձայն կրկնակի հարկման
(գումար, արտարժույթ)

մասին Համաձայնագրի՝

AMD paid in accordance with Double Taxation Treaty

կնքված Հայաստանի Հանրապետության և _____ միջև,
(պետության անվանումը/name of the country)

between the Republic of Armenia and

հաշվարկված՝ _____ նկատմամբ _____ դրույքաչափով:
(եկամտի տեսակը/kind of income) (տոկոս/percent)

calculated from _____ at rate of

1.2. Օգտվելով _____
(արտոնությունների տեսակը / type of incentives)

By using the tax incentives

արտոնություններից _____ ժամանակահատվածում
for the period of

չի վճարել շահութահարկ (եկամտահարկ) գումարով _____ դրամ
(գումար, արտարժույթ)

the following tax amount was not paid:

2. Առկայության դեպքում՝ ոչ ռեզիդենտ (իրավաբանական, ֆիզիկական) անձի իդենտիֆիկացման կոդը (համարը) ռեզիդենտության երկրում՝ _____ :
If available, the identification code of non-resident (both corporate or natural person) in the country of its (his) tax residency.

3. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի գրասենյակի գտնվելու վայրը կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի բնակվելու վայրը ռեզիդենտության երկրում՝ _____ :

Location of the foreign corporate person 's office or natural person 's domicile within the country of its (his) tax residency

4. Հարկը պահած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի (հարկային գործակալի) կամ ոչ ռեզիդենտի մշտական ներկայացուցչության լրիվ անվանումը՝ _____ :

Full name of Armenian tax resident which withheld the tax (tax agent), or of permanent establishment of the non-resident.

5. Հարկը պահած Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի (հարկային գործակալի) կամ ոչ ռեզիդենտի մշտական ներկայացուցչության ՀՎՀՀ-ն և գրանցման հասցեն

Taxpayer 's ID and legal address of Armenian resident which withheld the tax (tax agent), or of permanent establishment of the non-resident.

Կ. Տ. (Seal)

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային (տարածքային) տեսչության պետ՝

Head of Tax Inspectorate of the State Tax Service / _____ /

(Տեղեկանքը լրաց., փոփ. 23.03.11 N 665-Ն)

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏԻ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԵՐԻ (ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ, ԵԿԱՍՏԱՀԱՐԿ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի (շահութահարկ, եկամտահարկ) մասին տեղեկանքը (այսուհետ՝ տեղեկանք) ստանալու համար հարկ վճարած ոչ ռեզիդենտը կամ նրա կողմից լիազորված անձը գրավոր դիմում է հարկը պահած հարկային գործակալի (կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչություն: Հարկային գործակալի բացակայության դեպքում, երբ հարկը ոչ ռեզիդենտը վճարել է ինքնուրույն, հայտարարագրի հիման վրա, դիմումը ներկայացվում է Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչություն:

(1-ին կետը փոփ. 23.03.11 N 665-Ն)

2. Դիմումը ամրագրվում է դիմողի (պաշտոնատար անձի) ստորագրությամբ և առկայության դեպքում կնիքով՝ նշելով լրացման վայրն ու ամսաթիվը:

3. Դիմումում նշվում են դիմող ոչ ռեզիդենտի՝

- լրիվ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, հայրանունը, ազգանունը,
- ռեզիդենտության պետությունը, առկայության դեպքում իդենտիֆիկացման կոդը (համարը) ռեզիդենտության երկրում,

- եկամտի ստացման աղբյուրը՝ եկամուտ վճարողի անվանումը (անունը), հասցեն,

- ժամանակահատվածը, որի համար տրվում է տեղեկանքը:

4. Դիմումին կցվում են նաև այն փաստաթղթերի պատճենները, որոնք հավաստում են ոչ ռեզիդենտին հաշվարկված և վճարած եկամտի, ոչ ռեզիդենտից պահված հարկի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված լինելու հանգամանքը, մասնավորապես՝

ա) ոչ ռեզիդենտի ստացած եկամուտների հաշվարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը (պայմանագրեր, հաշիվ-ապրանքագրեր, գնման ակտեր, կատարողական ակտեր, աշխատավարձի հաշվարկային տեղեկագրեր և այլն):

բ) ոչ ռեզիդենտի եկամուտների ստացումը (բանկային փոխանցում, կանխիկ վճարում, հաշվանցում կամ այլ եղանակով վճարում) հաստատող փաստաթղթերը (վճարային հանձնարարագրեր, դրամարկղի ելքի օրդերներ, փոխադարձ ակտեր և այլն):

գ) ոչ ռեզիդենտի եկամուտներից հաշվարկված հարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը հաստատող փաստաթղթերը (հարկի գումարը ոչ ռեզիդենտի կողմից ինքնուրույն հաշվարկելու և վճարելու դեպքում):

դ) հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին վճարված եկամուտներից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված հարկի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարումը հաստատող փաստաթղթերը:

5. Կենտրոնական գանձապետարանի հաշվառման հարկային տեսչությունը (կամ հարկային տեսչությունը), ուսումնասիրելով դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, դիմումն ստանալուց 10 օրվա ընթացքում դիմողին տրամադրում է տեղեկանքը կամ գրավոր մերժումը՝ նշելով մերժման հիմքերը:

Տեղեկանքի տրամադրումը կարող է մերժվել, եթե ոչ ռեզիդենտի կողմից ներկայացրած փաստաթղթերից հնարավոր չէ եզրակացնել, որ՝

ա) ոչ ռեզիդենտի ստացած եկամուտներից կատարվել է հարկի վճարում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով), ընդ որում՝ սույն կարգի 4-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ տեղեկանքի տրամադրումը մերժելու համար, եթե ոչ ռեզիդենտի կողմից ներկայացված այլ փաստաթղթերը բավարար են եզրակացնելու, որ կատարվել է հարկի պահում եկամտի վճարման աղբյուրի մոտ:

բ) ոչ ռեզիդենտի ստացած եկամուտներից կատարվել է հարկի պահում (գանձում) հարկային գործակալների կողմից (այսինքն՝ երբ հարկը պահվել (գանձվել) է ոչ թե անմիջականորեն ոչ ռեզիդենտին վճարվող եկամտից, այլ հարկային գործակալի ֆինանսական միջոցներից):

(5-րդ կետը փոփ. 23.03.11 N 665-Ն)